

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), առաջնորդվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, կոռուպցիայի կանխարգելման ջանքերն առավել թիրախային և արդյունավետ դարձնելու նպատակով 2021 թվականից իրականացնում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգում: Նշված գործառույթի ապահովման նպատակով՝ 2024 թվականին Հանձնաժողովի կողմից իրականացվել է անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում (այսուհետ՝ Մշտադիտարկում):

[Մշտադիտարկումն](#) իրականացվել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային ցուցիչների հիման վրա՝ նախապես հաստատած հանրային մարմինների/պաշտոնների շրջանում:

ՆՊԱՏԱԿ

Մշտադիտարկումը նպատակ է ունեցել հայտարարատու պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրերի վերլուծության և Հանձնաժողովին հասանելի պետական տեղեկատվական շտեմարանների, ինչպես նաև բաց աղբյուրների տվյալների համադրության միջոցով դուրս բերել մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող անձանց՝ մարզպետների և նրանց տեղակալների, ինչպես նաև համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում անհամատեղելիության պահանջների խախտումները, վերլուծել խախտումների բնույթը և հնարավոր պատճառները և, որպես վերջնանպատակ, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ համանման խախտումների հետագա կանխարգելման ուղղությամբ: Գործընթացը միտված է նաև հանրային ծառայության ընդհանուր համակարգում բարեվարքության իրավիճակի վերաբերյալ պատկերացում ձևավորելուն,

օրենսդրությամբ սահմանված պահանջների վերաբերյալ իրազեկվածության աստիճանը գնահատելուն և Հանձնաժողովի գործունեության շրջանակներում ի հայտ եկած խնդիրները հասցեագրելուն:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Մշտադիտարկման իրականացման համար հիմք են ծառայել Հանձնաժողովի՝ Օրենքով սահմանված լիազորությունները և Հանձնաժողովի կողմից գործնականում վերհանված ոլորտային ռիսկերը:

Մասնավորապես, Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովին, կանխարգելման մանդատի շրջանակներում, տրվել է լիազորություն՝ հետևելու պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը:

Ի լրումն նշվածի՝ Հայաստանի Հանրապետությունը կոռուպցիայի կանխարգելման ոլորտում ստանձնել է միջազգային պարտավորություններ, մասնավորապես, 2022 և 2023 թվականներին ԳՐԵԿՈ-ի գնահատող խմբի կողմից Հայաստանի գնահատման 4-րդ և 5-րդ շրջափուլերի ընթացքում ներկայացվել են առաջարկներ՝ իշխանության ճյուղերում՝ օրենսդիր և գործադիր մարմիններում, կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ: Այսպիսով՝ նախորդող տարիներին իրականացված մշտադիտարկման գործընթացներում ընդգրկվել են իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք՝ չներառելով տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները, ինչը հիմք է հանդիսացել 2024 թվականին նշված շրջանակը ներառելու համար:

Միաժամանակ, անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակն ընտրելիս հաշվի է առնվել քաղաքացիներից, ոլորտային հասարակական կազմակերպություններից և պետական տարբեր գերատեսչություններից Հանձնաժողով հասցեագրվող դիմում-գրությունների, վերաբերելի մեղիա հրապարակումների սուբյեկտների շրջանակը: 2023-

2024 թվականներին իրականացված ուսումնասիրությունների զգալի մասը վերաբերել է համայնքների ղեկավարների, որոշ դեպքերում՝ մարզպետների կողմից անհամատեղելիության պահանջների խախտումներին:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից 2024 թվականին անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում իրականացնելու նպատակով որպես թիրախային խումբ սահմանվել է **տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար կազմը** (սահմանված է Մշտադիտարկման պլանի հավելվածով)¹՝ ընդհանուր թվով **պետական պաշտոն զբաղեցնող 100 անձ (փաստացի 105 անձ)**¹:

ՌԻՍԿԱՅԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

Հաշվի առնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար անհամատեղելիության պահանջների պահպանման օրենսդրությամբ սահմանված պահանջները և, հատկապես, «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածով սահմանված՝ այլ պաշտոններ զբաղեցնելու և այլ գործունեություն իրականացնելու սահմանափակումները՝ Հանձնաժողովը, որպես ռիսկային ցուցիչներ, ընդունել է հետևյալը.

1. արժեթղթերի առկայությունը և դրանց սահմանաչափը,
2. մեկից ավելի աղբյուրից ստացված աշխատանքի վարձատրությունը,
3. առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցությունը,
4. առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացվածությունը,
5. անհատ ձեռնարկատեր հանդիսանալը:

¹ Մշտադիտարկման ընթացքում որոշ պաշտոնատար անձանց պաշտոնավարումը դադարեցնելուց հետո, կատարվել են նոր նշանակումներ/ընտրություններ, որոնք ևս հավելյալ ուսումնասիրվել են:

Ի լրումն թվարկվածի՝ ուսումնասիրության ընթացքում իբրև ռիսկային ցուցիչ դիտարկվել է նաև բաց աղբյուրների միջոցով բացահայտման ենթակա տեղեկատվությունը՝ կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոն զբաղեցնելու դեպքերի վերաբերյալ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Մշտադիտարկումն իրականացվել է չորս փուլով.

1. տվյալների հավաքագրում,
2. տվյալների ուսումնասիրություն,
3. տվյալների գնահատում և ամփոփում,
4. արդյունքների հրապարակայնության ապահովում:

1. Տվյալների հավաքագրում

Տվյալների հավաքագրումն իրականացվել է Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարաններում, բաց աղբյուրներում, մեդիա հրապարակումներում, ինչպես նաև հայտարարագրերի համակարգում առկա վերաբերելի տեղեկությունների հավաքագրման միջոցով:

Տվյալների հավաքագրման փուլում պաշտոնատար անձանցից, այլ գերատեսչություններից հայցվել են վերաբերելի տեղեկություններ և/կամ պարզաբանումներ: Պաշտոնատար անձի վերաբերյալ տվյալների հավաքագրումը համարվել է ավարտված, երբ առերևույթ խախտումը հաստատելու կամ խախտման բացակայությունն ապացուցելու համար անհրաժեշտ բոլոր նյութերն ապահովված են եղել:

2. Տվյալների ուսումնասիրություն

Հավաքագրված տվյալների ուսումնասիրությունն իրականացվել է տվյալների համակողմանի վերլուծության, դրանց համադրման միջոցով:

Տվյալների ուսումնասիրությունը սկսվել է Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարաններից ստացված տեղեկությունների ուսումնասիրությունից՝ արդյունքները համադրելով մեդիա հրապարակումների և բաց աղբյուրներում առկա տեղեկությունների հետ: Ըստ անհրաժեշտության՝ ուսումնասիրվել են նաև պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ:

3. Տվյալների գնահատում/ամփոփում

Ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները վերլուծվել են՝ առերևույթ խախտման հիմքերը գնահատելու նպատակով: Մշտադիտարկումը սահմանված ժամկետում իրականացնելու նպատակով՝ բոլոր անձանց վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվել են և ներկայացվել Հանձնաժողովի նիստերում:

4. Հրապարակայնության ապահովում

Մշտադիտարկման գործընթացի հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով՝ Մշտադիտարկման պլանը և գործընթացի հրապարակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղումով՝ <https://shorturl.at/5ltRY>: Մշտադիտարկման ամփոփումը ևս ենթակա է հրապարակման:

[ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ](#)

Հաշվի առնելով, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը Հանձնաժողով ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը մշտադիտարկման գործընթացի արդյունավետությունը ապահովելու, ինչպես նաև առավել ամբողջական տվյալներ ներառելու նպատակով գործընթացը սկսվել է տարեկան հայտարարագրերի հրապարակումից հետո:

Այսպիսով, անհամատեղելիության պահանջների մշտադիտարկումը մեկնարկել է 2024 թվականի հունիսի 10-ից՝ հայտարարագրերի հանձնման գործընթացն ավարտելուն զուգահեռ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2024 թվականի մարտին Մշտադիտարկման արդյունքում 105 հանրային պաշտոն զբաղեցնող անձի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններն ամբողջությամբ ավարտվել են և արդյունքներն ամփոփվել են:

Բաց աղբյուրներից և տեղեկատվական շտեմարաններից ստացված տվյալները հաստատելու/ամբողջացնելու նպատակով կատարվել են հարցումներ Պետական եկամուտների կոմիտե, Կենտրոնական դեպոզիտարիա, առևտրային բանկեր, ինչպես նաև պարզաբանումներ են հայցվել ուսումնասիրության սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձանցից: Ուսումնասիրության հիմնական արձանագրումները՝ ըստ ոլորտների ներկայացվում են ստորև.

1. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրերը՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում վերջիններիս հնարավոր մասնակցությունը կամ գործադիր մարմնում ներկայացվածությունը ստուգելու նպատակով: Զուգահեռաբար ուսումնասիրվել են վերջիններիս ընտանիքի անդամների՝

առևտրային կազմակերպություններում բաժնեմաս ունենալու վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված անձանց և կազմակերպությունների՝ պետական կամ համայնքային գնումների գործընթացների մասնակցության դեպքերը: Արդյունքում պարզվել է, որ՝

- **105** պաշտոնատար անձից **40**-ի (կամ 38 տոկոսի) հետ օրենքի իմաստով փոխկապակցված անձինք՝ ընտանիքի անդամները, զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ (ունեն գործող առևտրային կազմակերպություններում մասնակցություն կամ ներկայացված են դրանց կառավարման մարմիններում, կամ հաշվառված են որպես անհատ ձեռնարկատեր),
- **9** դեպքում արձանագրվել է, որ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունները կամ փոխկապակցված անհատ ձեռնարկատերերը մասնակցել են համայնքային գնումների գործընթացների, ընդ որում **7 դեպքում՝** նույն այն համայնքում, որտեղ փոխկապակցված անձինք զբաղեցրել են համայնքի ղեկավարի պաշտոնը, մյուս երկու դեպքում՝ պատվիրատու հանդիսացել են այլ համայնքներ:
- Փոխկապակցված անձանց մասնակցությամբ կամ վերջիններիս կողմից ղեկավարվող ընկերությունների մեծամասնությունը թեև հիմնադրվել է տարբեր ժամանակահատվածներում և հիմնականում՝ նախքան Մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող անձանց կողմից պաշտոնի ստանձնումը, այնուամենայնիվ, նշված անձինք պետական և համայնքային գնումներին առավել ակտիվ մասնակցություն են ցուցաբերել փոխկապակցված անձանց պաշտոնավարման ընթացքում: Ընդ որում, որոշ ընկերություններ հիմնադրվել են ուսումնասիրության սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձանց կողմից՝ նախքան պաշտոնի ստանձնումը, իսկ պաշտոնի ստանձնումից հետո՝ դրանցում վերջիններիս բաժնեմասերն օտարվել են ընտանիքի անդամներին, ովքեր հետագայում մասնակցել են համապատասխան համայնքներում հայտարարված գնման գործընթացների:

- Պաշտոնատար անձանց կողմից շահերի բախման իրավիճակներում կնքված պայմանագրերի առարկան հիմնականում վերաբերել է շինարարական աշխատանքների, վառելիքի, այդ թվում՝ բնական գազի ձեռքբերման, ավտոմեքենաների տեխսպասարկման և ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցման բնագավառներին:
- Հանձնաժողովը մշտադիտարկման արդյունքում շահերի բախման իրավական կարգավորումների խախտման՝ մասնավորապես՝ շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Հանձնաժողովին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով համապատասխան պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցել է թվով **3 վարչական վարույթ՝ ՎԻՎ/81/2025, ՎԻՎ/15/2025 և ՎԻՎ/83/2025**, որոնց արդյունքում վերջիններիս նկատմամբ կիրառվել է վարչական տույժ: Նշված 3 դեպքերում Հանձնաժողովն արձանագրել է, որ համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձինք, որպես պատվիրատուի ղեկավար, համայնքային կարիքների համար պատվիրված գնման գործընթացների արդյունքում պայմանագրեր են կնքել իրենց փոխկապակցված անձանց կամ նրանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հետ:
- Այսպես՝

1. Մշտադիտարկման շրջանակներում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԾՁԲ-24/04 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի մայիսի 14-ին Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, մեքենաների տեխսպասարկման ծառայությունների ձեռքբերման պայմանագիր է կնքել «Գրիգ Բիզնես» ՍՊ ընկերության հետ, որի 100 % բաժնետերը և իրական շահառուն, պայմանագրերի կնքման պահին՝ նաև գործադիր մարմնի ղեկավարը, հանդիսացել է իր հետ փոխկապակցված անձը՝ եղբայրը՝ Գրիգոր Փարսյանը: Գնման գործընթացին առնչվող փաստաթղթերի ուսումնասիրությամբ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների և ընթացակարգերի առերևույթ խախտումներ չեն վերհանվել, հետևապես, Հանձնաժողովը խնդրո առարկա պայմանագրի կնքումը դիտարկել է Հանձնաժողովին շահերի բախման վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու պահանջի համատեքստում: Հանձնաժողովն արձանագրել է, որ Գևորգ Փարսյանը նախքան պայմանագրի կնքումը Հանձնաժողով չի ներկայացրել շահերի բախմանը

վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն, որի պարտավորությունը վերջինս կրել է որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ: Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 9-ի ՎԻՎ/81/2025 [որոշմամբ](#) Գևորգ Փարսյանի նկատմամբ կիրառել է վարչական տույժ:

2. Մեկ այլ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2024 թվականի փետրվարի 13-ին Գավառի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված՝ ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-24/2 ծածկագրով գնանշման ընթացակարգի արդյունքում, Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, որպես պատվիրատուի ղեկավար, ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալության ծառայությունների ձեռքբերման պայմանագիր է կնքել «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊ ընկերության հետ: Պայմանագրի կնքման պահին «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ-ում 10-ական %-ով բաժնեմասնակցություն են ունեցել Գուրգեն Մարտիրոսյանի որդիները՝ Ե. Մարտիրոսյանը, Յ. Մարտիրոսյանը, Ն. Մարտիրոսյանը, ինչպես նաև քույրը՝ Ն. Մարտիրոսյանը: Գնման գործընթացին առնչվող փաստաթղթերի ուսումնասիրությամբ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների և ընթացակարգերի առերևույթ խախտումներ չեն վերհանվել, հետևապես, Հանձնաժողովը խնդրո առարկա պայմանագրի կնքումը դիտարկել է Հանձնաժողովին շահերի բախման վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու պահանջի համատեքստում: Պայմանագրի կնքման շրջանակներում Գուրգեն Մարտիրոսյանը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չի ներկայացրել: Հաշվի առնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.31-րդ հոդվածի պահանջները՝ Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 13-ին ընդունել է Գուրգեն Մարտիրոսյանի նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին ՎԻՎ/15/2025 [որոշումը](#):

3. Մշտադիտարկման շրջանակներում իրականացված մեկ այլ ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ 2024 թվականի հուլիսի 31-ին Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների ձեռքբերման նպատակով համայնի ղեկավար Մանվել Փարամազյանը կնքել է ԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/06-08 ծածկագրով գնման պայմանագիր «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊ

ընկերության հետ, որի իրական շահառուն՝ 40 % անուղղակի մասնակցությամբ հանդիսանում է համայնքի ղեկավարի կինը՝ Լ. Դավթյանը: Գնման գործընթացին առնչվող փաստաթղթերի ուսումնասիրությամբ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների և ընթացակարգերի առերևույթ խախտումներ չեն վերհանվել, հետևապես, Հանձնաժողովը խնդրո առարկա պայմանագրի կնքումը դիտարկել է Հանձնաժողովին շահերի բախման վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու պահանջի համատեքստում: Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ վերոնշյալ պայմանագիրը կնքելուց առաջ Մանվել Փարամազյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով չի ներկայացվել շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն, ինչի հիմքով Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 4-ին ընդունել է Մանվել Փարամազյանի նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին ՎԻՎ/83/2025 [որոշումը](#):

Հարկ է նկատել, որ շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին հայտարարություն չներկայացնելու հիմքով Հանձնաժողովը համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց (համայնքների ղեկավարների) նկատմամբ, բացի մշտադիտարկման շրջանակներում իրականացված գործողություններից, 2024 թվականին հարուցել է ևս 4 վարույթ՝ մեղիա հրապարակումների հիման վրա, որոնց համատեքստում քննության առարկա են դարձվել ոչ միայն ազգակցական, այլև ոչ ազգակցական/անձնական հարաբերություններով կապված անձանց հետ պայմանագրերի կնքման դեպքերը:

**Պետք է նկատել, որ վերոնշյալ անձինք վարույթային գործընթացներից հետո՝ 2025 թվականին փոխկապակցված անձանց և վերջիններիս մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հետ համայնքային գնումների գործընթացների շրջանակներում նախքան նոր պայմանագրերի կնքումը օրենքով սահմանված կարգով դիմել են Հանձնաժողով՝ շահերի բախման իրավիճակների առնչությամբ առաջարկություն ստանալու նպատակով: Հանձնաժողովն, այդպիսով, հնարավորություն է ունեցել ուսումնասիրելու համապատասխան գնման գործընթացները, գնահատելու օրենսդրական վերաբերելի պահանջների պահպանված լինելու հանգամանքը և արդյունքում պաշտոնադար անձանց ներկայացնել համապատասխան առաջարկություններ:*

2. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրերի և Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

- 105 պաշտոնատար անձանցից 54-ը (կամ 51.4 %-ը) երբևէ չի ունեցել մասնակցություն կամ ներկայացվածություն առևտրային կազմակերպություններում:
- 105 պաշտոնատար անձանցից 51-ը (կամ 46.6%-ը) տարբեր ժամանակահատվածներում մասնակցություն կամ ներկայացվածություն են ունեցել առևտրային կազմակերպություններում կամ հաշվառված են եղել որպես անհատ ձեռնարկատեր:
- 33 դեպքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձանց կողմից նախքան պաշտոնի ստանձնումը կազմակերպության մասնակցությունը կամ ներկայացվածությունը, ինչպես նաև ԱԶ-ի գործունեությունը դադարեցվել են:
- Բոլոր այն դեպքերում, երբ ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ առևտրային կազմակերպությունների գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է, Հանձնաժողովը դրանց գործունեության դադարեցման հիմքերի և ժամկետների վերաբերյալ տեղեկություններ է հայցել իրավասու մարմիններից: Առանձին դեպքերում տեղեկատվություն է հայցվել նաև ԱԶ-ների և առևտրային կազմակերպությունների՝ փաստացի իրացման շրջանառության առկայության վերաբերյալ: Նշվածի համատեքստում հարցումներ են կատարվել ՊԵԿ՝ 8 անհատ ձեռնարկատիրոջ և 6 առևտրային կազմակերպության վերաբերյալ: Ստացված տվյալների գնահատմամբ արձանագրվել է, որ 6 առևտրային կազմակերպությունների գործունեությունը դադարեցված է եղել մինչև

պաշտոնատար անձանց կողմից պաշտոնի ստանձնումը, իսկ ԱԶ-ների դեպքում («գործող» կարգավիճակ ունեցող)՝ բացակայել է իրացման շրջանառությունը:

- Ուսումնասիրության շրջանակներում էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հարցումներ են կատարվել նաև մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձանց:
- Պաշտոնատար անձանցից մեկը պաշտոնավարման ընթացքում ունեցել է գործող առևտրային կազմակերպություններում բաժնեմասնակցություն: Վերջինիս բաժնեմասն օրենքի պահանջների համապատասխան հանձնված է եղել հավատարմագրային կառավարման: 1 դեպքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձի բաժնեմասը հանձնված է եղել հավատարմագրային կառավարման օրենքով պահանջների խախտմամբ (հավատարմագրային կառավարիչ է հանդիսացել ֆիզիկական անձը):
- Մշտադիտարկման արդյունքում անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտում է արձանագրվել **երեք** անձի մոտ, մի դեպքում՝ գործող առևտրային կազմակերպության բաժնեմասն օրենքով սահմանված կարգով հավատարմագրային կառավարման չհանձնելու, մյուս դեպքում՝ հավատարմագրային կառավարման պահանջների խախտմամբ հանձնելու, և վերջին դեպքում՝ պաշտոնավարման ընթացքում առևտրային կազմակերպության ներկայացուցչական գործառույթներին ներգրավվածության հիմքով:

Այսպես, Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը 2008 թվականից հանդիսանում է «ԳՈՐ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության իրական շահառուն՝ 100 տոկոս բաժնեմասնակցությամբ: Վերջինս 2021 թվականից՝ պաշտոնավարմանը զուգահեռ, շարունակել է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, միաժամանակ, օրենքով սահմանված ժամկետում առևտրային կազմակերպության բաժնեմասը վերջինիս կողմից չի հանձնվել հավատարմագրային կառավարման, ինչի

առնչությամբ Հանձնաժողովը 2025 թվականի հունվարի 31-ին որոշել է նախաձեռնել անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտման հիմքով վարույթ (որոշումը ենթակա է հրապարակման):

Երկրորդ դեպքում պարզվել է, որ Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, զբաղեցնելով համայնքի ղեկավարի համայնքային քաղաքական պաշտոն, պաշտոնավարմանը զուգահեռ իրականացրել է ներկայացուցչական գործառույթներ (հանդես եկել որպես իր անչափահաս որդու՝ Ն. Մարտիրոսյանի ներկայացուցիչը) «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊ ընկերությունում, ինչով թույլ է տվել «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտում: Միաժամանակ, Հանձնաժողովը մտահոգիչ է համարում այն հանգամանքը, որ վերոնշյալ ընկերությունը պարբերաբար մասնակցում է Գավառի համայնքապետարանի կողմից պատվիրվող գնման գործընթացներին և կնքում պայմանագրեր, այն դեպքում, երբ պատվիրատուի ղեկավար է համարվում հենց ինքը՝ Գուրգեն մարտիրոսյանը: Գ. Մարտիրոսյանի կողմից անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտման հիմքով Հանձնաժողովը 2025 թվականի հունվարի 31-ին որոշել է նախաձեռնել անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտման հիմքով վարույթ (որոշումը ենթակա է հրապարակման):

Երրորդ դեպքում արձանագրվել է, որ Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալոյանը «Հակոբ Շահգալոյան» ՍՊ ընկերությունում իր բաժնեմասը հանձնել է հավատարմագրային կառավարման «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պահանջների, մասնավորապես՝ հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջների առերևույթ խախտմամբ: Նշվածի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը որոշել է վերջինիս նկատմամբ նախաձեռնել համապատասխան վարույթ (որոշումը ենթակա է հրապարակման):

3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող (...) զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ (...):

Նույն հոդվածի 8-րդ մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա ֆոնդային բորսայում առևտրին թույլատրված արժեթղթեր ունենալը՝ նույն ընկերության կանոնադրական կապիտալում առավելագույնը մեկ տոկոս մասնակցության շրջանակներում:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավակարգավորումները՝ անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել է նաև պաշտոն զբաղեցնող անձանց առևտրային արժեթղթեր ունենալու հանգամանքը և առկայության դեպքում դրանց սահմանաչափերը:

Բոլոր սուբյեկտների վերաբերյալ հարցում է ուղարկվել Կենտրոնական դեպոզիտարիա: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից փոխանցված տվյալները համադրվել են պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրված տվյալների հետ, հաշվարկվել է վերջիններիս ունեցած արժեթղթերի՝ համապատասխան ընկերությունների կանոնադրական կապիտալի նկատմամբ տոկոսային հարաբերակցությունը:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ 105 պաշտոնատար անձին միայն 11-ն են ունեցել ցուցակված ընկերությունների առևտրի թույլատրված արժեթղթեր, սակայն արժեթղթերի քանակը բոլոր դեպքերում չի գերազանցել օրենքով սահմանված թույլատրելի շեմը: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրել է, որ 5 պաշտոնատար անձ՝ իր 2023 թվականի տարեկան հայտարարագրի «Արժեթղթեր և բաժնային ներդրումներ» բաժնում չի հայտարարագրել արժեթղթերը, ինչի շրջանակներում իրականացվել են Հանձնաժողովի լիազորություններից բխող գործընթացներ:

4. ԱՅԼ ՎՃԱՐՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվել է այլ վճարովի աշխատանք կատարելու արգելք՝ բացառությամբ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի իրականացման: Հաշվի առնելով սույն կարգավորումը՝ մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են նաև պաշտոնատար անձանց կողմից հանրային պաշտոնում պաշտոնավարման համար տրվող վարձատրությունից բացի այլ աղբյուրներից վարձատրության ստացմանն առնչվող տվյալները, մասնավորապես՝ վերջիններիս կողմից 2023 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրած այլ եկամուտները և Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների վերաբերելի տվյալները:

Ուսումնասիրության շրջանակում ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում պաշտոնատար անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված այլ վճարովի աշխատանք կատարելու հիմքով անհամատեղելիության պահանջի խախտման դեպքեր չեն արձանագրվել:

5. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԱՅԼ ՊԱՇՏՈՆ ԶԲԱԴԵՑՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավադրույթը՝ Հանձնաժողովն անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրության առարկա է դարձրել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից իրենց կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոնների զբաղեցման հանգամանքը, որի արդյունքում արձանագրվել է, որ ուսումնասիրության ենթակա 105 պաշտոն զբաղեցնող անձանցից միայն 1-ն է համատեղությամբ զբաղեցրել այլ պաշտոն՝ հանդիսացել է ավագանու անդամ:

Այդուհանդերձ, նկատի ունենալով պաշտոնների ստանձնման ժամկետները, Հանձնաժողովն արձանագրել է, որ վերջինիս նկատմամբ կիրառելի են եղել «Հանրային ծառայության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով սահմանված՝ համատեղությամբ պաշտոնավարումը թույլատրող անցումային դրույթները, հետևապես, անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտում սույն դեպքով չի արձանագրվել:

6. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մշտադիտարկման շրջանակներում, ի թիվս անհամատեղելիության պահանջներին առնչվող խախտումների, արձանագրվել են պաշտոնատար անձանց կողմից, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամների կողմից հայտարարագրմանը ներկայացվող պահանջների խախտումներ, մասնավորապես՝ հայտարարագրման ենթակա տվյալների չհայտարարագրման կամ թերի հայտարարագրման, որոշ դեպքերում՝ հայտարարագրերի չներկայացման դրսևորումներով: Հանձնաժողովի կողմից ընդհանուր՝ 42 անձանց նկատմամբ (պաշտոնատար անձ և ընտանիքի անդամներ) իրականացված գործընթացների արդյունքում՝ 20 դեպքով հարուցվել է վարչական վարույթ, 9 դեպքով որոշվել է ավարտել ուսումնասիրությունը և առաջարկել հայտարարագրի ուղղում: